ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետը 1958 թ. մայիսի 11-ին ընդունեց օրենք բնության պահպանության մասին, որի հիման վրա Գիտությունների ակադեմիայի Նախագահությանը կից ստեղծվեց Բնության պահպանության հանձնաժողով։ Վերջինս գիտականորեն մշակում է ռեսպուբլիկայի բնական ռեսուրսների պահպանության, վերարտադրման ու ռացիոնալ օգտագործման հարցերը։ Հանձնաժողովը իր աշխատանքին հաղորդակից դարձրեց մեր ռեսպուբլիկայի հողային ծածկույթի, ջրային ռեսուրսների, բուսական ու կենդանական աշխարհի, անտառային տնտեսության, օդի ու ջրերի արդյունաբերական թափուկներից ու գազերից պահպանելու հարցերով զբաղվող մի շարք գիտա-հետազոտական ինստիտուտների և բարձրագույն ուսումնական հաստատությունների բազմաթիվ գիտնականների։

Աշխատավորական լայն մասսաներին հայրենի բնության պահպանության գործին մասնակից դարձնելու, մատաղ սերնդին բնության պահպանության ոգով դաստիարակելու, ինչպես նաև բնական ռեսուրսների պահպանության ու ռացիոնալ օգտագործման գաղափարները ազգաբնակչության լայն խավերի մեջ տարածելու նպատակով առաջ քաշվեց Հայաստանում բնության պահպանության կամավոր ընկերության կազմակերպելու հարցը։

1959 թ. հոկտեմբերի 20-ին ռեսպուբլիկայի ղեկավար օրգանները հավանություն տվեցին Հայաստանի բնության պահպանության ընկերության հիմնելու առաջարկին։ Ստեղծվեց կազմկոմիտե, որը ծավալուն աշխատանք տարավ ընկերությունը կազմակերպելու և առաջին համագումարը հրավիրելու ուղղությամբ։ 2—3 ամսվա ընթացքում տեղական կազմկոմիտեներ ստեղծվեցին Երևանում, Լենինականում, Կիրովականում և ռեսպուբլիկայի համարյա բոլոր շրջանային կենտրոններում։ Հայաստանի բնության պահպանության կամավոր ընկերության ստեղծելու նախապատրաստական այս շրջանում մշակվեց Ընկերության կանոնադրության նախագիծը։ 1959 թ. դեկտեմբերի 8-ին հրավիրվեց Հայաստանի բնության պահպանության ընկերության անդրանիկ համագումարը, որը հաստատեց Ընկերության կանոնադրությունը։ Համագումարը ընտրեց Ընկերության ռեսպուբլիկական խորհուրդ՝ բաղկացած 51 հոգուց և նախագահություն, որի կազմի մեջ մտան շահագրգռված պետական ու հասարակական կազմակերպությունների, գիտական հիմնարկների ու գերատեսչությունների ներկայացուցիչները։

Իր գոյության մոտ երեք տարվա ընթացքում Հայաստանի բնության պահպանության ընկերությունն իր շարքերն է ներգրավել մոտ 85 հազար անդամ և 1700 հիմնարկ-ձեռնարկություն՝ որպես իրավաբանական անդամ (գիտական հիմնարկներ, դպրոցներ, գործարաններ, սովխոզներ ու կոլխոզներ, պետական ու հասարակական այլ կազմակերպություններ)։ Ռեսպուբլիկայի քաղաքներում և բոլոր շրջաններում ստեղծվել են ընկերության տեղական բաժանմունքներ։

Բնության պահպանության ընկերության նախագահությունը ակադեմիայի բնության պահպանության հանձնաժողովի հետ միասին կազմակերպել ու կազմակերպում է գիտական սեսիաներ ու կոնֆերանսներ՝ նվիրված բնության պահպանության կենսական խնդիրներին։ Անցած ժամանակամիջոցում 26 գիտական սեսիաներ և կոնֆերանսներ են կազմակերպվել Ալավերդու, Ստեփանավանի, Կալինինոյի, Հրազդանի, Եղեգնաձորի, Սպիտակի, Աշտարակի, Կիրովականի, Իջևանի, Շամշադինի, Կամոյի, Ապարանի, Ղափանի, Գորիսի, Թալինի շրջաններում, Լենինական, Երևան, Կիրովական քաղաքներում։ Յուրաքանչյուր սեսիայում ու կոնֆերանսում քննարկվել են 4—6 զեկուցումներ նվիրված տվյալ շրջանի բուսական աշխարհի, հողերի, ջրերի, որսորդական ֆաունայի, կանաչ տնկարկների, լեռնային արոտների պահպանության ու օգտագործման հարցերին։ Զեկուցումների քննարկմանը ակտիվ մասնակցել են մտավորականները, կոլտնտեսականները, կոմերիտականները, դպրոցական աշակերտներն ու գործարանների բանվորները։

Սևանի հողագրունտների յուրացման հարցերին նվիրված գիտական սեսիայում քննարկվել է 9 զեկուցում՝ տարբեր գիտա-հետազոտական հիմնարկների կողմից կատարված թեմաների շուրջը։ Հետազոտությունների ամփոփման հիման վրա Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով բացված ավազուտների ամրացման ու կանաչապատման նպատակով հանձնարարվել է լայն չափով օգտագործել [illegible], բարդին, ուռին, կորնգանը, իշառվույտը, պուկցինելիան, ինչպես նաև պտղատու ծառեր։ Անցած 3 տարիների ընթացքում ընկերությունը տպագրել է բնության պահպանության հիմնական խնդիրներին նվիրված 22 հանրամատչելի բրոշյուրներ ու գրքեր։ Դրանցից են դոցենտ Հ.

Բումանյանի գիրքը՝ նվիրված թռչունների միջոցով մեր դաշտերի, այգիների ու անտառների վնասատուների դեմ պայքարելու հարցին, կենսաբանական գիտությունների թեկնածու Յա. Մուլքիջանյանի գիրքը՝ նվիրված ուղղաձիգ կանաչապատման հարցին, կենսաբանական գիտությունների թեկնածու Զ. Ասատվածատրյանի գիրքը՝ ծաղկաբույսերի մշակման մասին, դոցենտ Ա. Մարգարյանի ու Հ. Շահինյանի գիրքը՝ Հայաստանի վայրի պտուղների ու անտառայգիներ ստեղծելու հարցի մասին և այլն։

Բնության պահպանության ընկերությունը հրատարակում է «Հայաստանի բնություն» պարբերականը, որի առաջին համարները ջերմ ընդունելություն գտան ոչ միայն Սովետական Հայաստանում, այլև միութենական ռեսպուբլիկաներում ու մեր երկրի սահմաններից դուրս։ Ընկերությունը, ընդամենը, հրատարակել ու հրատարակում է պատկերազարդ պլակատներ, զեկուցողների համար ձեռնարկներ, ցուցադրական այլ նյութեր։ Ընկերությունը և Գիտությունների ակադեմիայի բնության պահպանության հանձնաժողովը, կոորդինացնելով իրենց գործունեությունը, մասսաների մեջ բնության պահպանության խնդիրները պրոպագանդող ակտիվի համար կազմակերպել են հասարակական համալսարան, որը առաջինն է Սովետական Միության մեջ։ Համալսարանում նախօրոք մշակված ու հաստատված պլանով դասախոսություններ են կարդացվում բուսաբանության, անտառարուծության, հողերի պահպանության, կենդանաբանության (օգտակար ֆաունայի), կուրորտային ռեսուրսների, օգտակար հանածոների, ջրային ռեսուրսների ու ռեսպուբլիկայի բնական այլ հարստությունների մասին։

Հիմնարկներում, գործարաններում, պրոցներում ու կոլտնտեսություններում բնության հարստությունների ու նրանց պահպանության հարցերին նվիրված հանրամատչելի զեկուցումներ ու զրույցներ կազմակերպելու համար ընկերությունը մշակել է բնության պահպանության հարցերին նվիրված բա.զմա-կողմանի թեմատիկա, որն ընդգրկում է 170 թեմա։

Ընդլայնվում է ընկերության թե՛ գրավոր և թե՛ բանավոր պրոպագանդայի լսարանը։ Մեծ թվով զեկուցումներ են կարդացվել Հայաստանի բաղարներում, շրջանային կենտրոններում, գյուղերում, պրոցներում, գործարաններում ու անգամ գինվորական մասերում։ Այդ զեկուցումները, կոնֆերանսները ու սիտական սեսիաները տվել են իրենց դրական արդյունքները։ Դրանք նպաստել են ոչ միայն բնասերների ներգրավմանը ընկերության մեջ, այլև բարձրացրել են ազդարարակչության, առանձնապես մեր դպրոցականների, ակտիվությունը բնությունը հարստացնելու ու գեղեցկացնելու համար մղվող պայքարում։ Ընկերության անդամները տեղերում շոշափելի գործ են կատարում կանաչապատման և ընդհանրապես բնության պահպանության ու հարստացման ուղղությամբ։ Բնագիտության դասատուների ղեկավարությամբ պատանի բնասերները կազմակերպում են կենդանի բնության անկյուններ, մշակում են ծառ ու ծաղիկ, խնամում կենդանիներ ու երգեցիկ թռչուններ, պիոներական հողամասում փորձարկում կուլտուրական բույսերի տարբեր տեսակներ։ Երկու տարվա ընթացքում Ստեփանավանի, Կիրովականի, Հրազդանի, Իջևանի շրջաններում, Լենինական ու Տիլիջան բաղարներում պիոներականների ձեռքերով վայրի պտղատու ծառերի վրա կատարվել է 80000 կուլտուրական տեսակների տանձի ու խնձորի պատվաստ, տնկված են 1709465 դեկորատիվ ծառեր ու թփեր, ծաղկով ու կանաչով է պատած 450000 քմ տարածություն, պատրաստված են ու վաղ գարնանը պուրակների, այգիների, անտառների ծառերին կախված 26378 թռչնարներ, գյուղատնտեսական կուլտուրաների ու կանաչ տնկարկների վնասատուներին ոչնչացնող օգտակար թռչուններին գրավելու նպատակով։ Միայն Երևան բաղարի արդյունաբերական շրջանում կանաչապատված է 219000 քմ տարածություն, յուրացված է 90000 քմ նոր տարածություն, տնկված է 25800 թփուտ, 22400 ծառ, 11500 գծամետր կանաչ ցանկապատ, բարեկարգված է 23 փողոց և այլն։ Այս աշխատանքների մեծ մասը կատարված է դպրոցականների ուժերով։ Բացի այդ մի շարք դպրոցներում ստեղծվել են կանաչ պարեկներ, որոնք պահպանում են դպրոցի ու շրջակայքի փողոցների կանաչ տնկարկները։ Դպրոցականներն այժմ իրենց գործունեությունը փոխադրել են դպրոցներից դուրս, կանաչազարդում են դեպի իրենց դպրոցները տանող ճանապարհները։ Անշուշտ մեր դպրոցականների հայրենասիրական այս գործը ամենից առաջ պետք է վերագրել նրանց դասատուների՝ ուսուցիչների բաջալերանքին։

Հարց ուշադրություն դարձնելով մատաղ սերնդին բնության պահպանության ոգով դաստիարակելու հարցերին, ընկերությունը ուսումնասիրել է բնագիտության դրվածքը ռեսպուբլիկայի 150 դպրոցներում և ուսումնասիրության արդյունքները քննարկման է դրել դպրոցական աշխատողների խորհրդակցությանը, որին մասնակցել են Լուսավորության մինիստրության կոլեգիայի անդամները։ Խորհրդակցությունը մի շարք կոնկրետ առաջարկներ է մատուցել մինիստրության կոլեգիա։ Ելնելով այդ առաջարկներից մինիստրությունը որոշում է ընդունել՝

Հայաստանի բոլոր դպրոցներում բարելավել բնագիտության դասավանդումը, ստեղծել կենդանի բնության անկյուններ ու բնության պահպանության բջիջներ, բնության պահպանության հարցերը մտցնել ուսման ծրագրի մեջ։ Դպրոցների կանաչապատման ու գեղեցկացման աշխատանքի մեջ ներգրավվում են ավելի ու ավելի մեծ քանակությամբ դպրոցականներ ու մանկավարժներ, և հեռու չէ այն օրը, երբ Հայաստանում չենք գտնի ոչ մի դպրոց, որը շրջապատված չլինի ծառերի կանաչ սաղարթով, բուրավետ ծաղիկներով։ Լուսավորության մինիստրության կոլեգիայի որոշմամբ դպրոցներում բնագիտության դասավանդումը ավելի սերտորեն է կապվում պրակտիկ կյանքի հետ։

Բնության պահպանության ընկերության ակտիվ անդամների ուժերով տասնյակ հազարավոր դեկորատիվ ու պտղատու ծառեր ու թփեր են տնկված Եղեգնաձորի, Աշտարակի, Դորիսի, Շամշադինի, Մարտունու, Կամոյի, Սպիտակի, Ախուրյանի, Ալավերդու, Կալինինոյի ու այլ շրջաններում։

Բնության պահպանության ու գեղեցկացման գործին վերջին ժամանակներս մեծ չափով օգնում են և մեր ռեսպուբլիկայի բարձրագույն հաստատություններում սովորող ուսանողները։ Ընկերության ակտիվ միջամտությամբ բուհերում բարելավվել է բնության պահպանության հիմունքներին առնչվող առարկաների դասավանդումը և այդ նպատակով մշակվել է հատուկ ծրագիր։ Որոշ բարձրագույն դպրոցներում (օրինակ, Պետական համալսարանում, Գյուղատնտեսական ու Մանկավարժական ինստիտուտներում) բնագիտական առարկաների ծրագրերում անհրաժեշտ տեղ է հատկացվում բնության պահպանության պրոբլեմներին։

Ընկերությունը ներկայումս փորձ է անում ռեսպուբլիկայի 925 ակումբային հիմնարկներում ու կուլտուրայի տներում ստեղծել բնության պահպանության բջիջներ և դրանց շուրջը համախմբել ընկերության ակտիվին, ծավալել դավառագիտական շարժում և բոլոր շրջանային կենտրոններում ստեղծել բնագիտական թանգարաններ, որոնք դաստիարակչական ու կուլտուրական մեծ նշանակություն կունենան։

Ընկերության բարեկամներն են նաև առողջապահության ֆրոնտի աշխատողները, որոնք բնության պահպանության ընկերության շարքերում զգալի աշխատանք են տանում սանիտարական կուլտուրան բարձրացնելու համար մղվող պայքարում։ Բժիշկները հանդես են գալիս բնակչության առաջ զեկուցումներով և հաճախ բահն ու տնկիները ձեռքերին բնություն հարստացնելու և գեղեցկացնելու լավագույն օրինակ են տալիս։

Բնության պահպանության գործին արժեքավոր ծառայություն է մատուցում ռեսպուբլիկայի և՛ կենտրոնական և՛ տեղական մամուլը։ Ռեսպուբլիկական կենտրոնական մամուլը հաճախ է անդրադառնում բնության առաջ դրված խնդիրներին։ Այս տեսակետից ուշադրության արժանի է «Երևան» թերթի գործունեությունը։ Նա իր էջերում հաճախ է տպագրում ինֆորմացիաներ բնության պահպանության նորարարների ու հնտուզիաստների մասին։ Թերթի նախաձեռնությամբ կազմակերպվում է բնակելի շենքերի պատշգամբները զարդարող բնասերների մրցություն, որը նպաստում է այդ գործին ձեռնարկողների քանակի աճմանը։ Թերթը խրախուսում է բնակարանների բակերն ու փողոցները ծաղիկներով ու կանաչով զարդարող տնային տնտեսուհիների նախաձեռնությունը։ Այժմ մենք բնասերների շարժման մեջ ունենք տնային տնտեսուհիների մեծ խումբ, որի գործունեությունը կազմակերպելու համար ընկերության կից ստեղծվում են կանանց խորհուրդներ։

«Սովետական Հայաստան» ու «Կոմունիստ» թերթերը հաճախ ամբողջական էջեր են նվիրում բնության պահպանության, ռեսպուբլիկայի բուսական ու կենդանական աշխարհը զարգացնելու հարցերին։ Շրջանային մամուլն ու բազմատիրաժ թերթերը տեղերում պայքար են տանում մեր հասարակության մեջ դեռևս գոյություն ունեցող, բայց շարունակ նվազող, որսագողերի, կանաչ ծառերը հատողների դեմ։ Որքան լայն հասարակական խավեր ներգրավվեն բնության պաշտպանության ազնիվ գործի մեջ, այնքան ավելի շատ կնվազեն ու մեկընդմիշտ կվերանան բնության արժեքը չգիտակցող մարդիկ։

Հայաստանի պարտիական ու սովետական օրգաններում հաճախ են լսվում ու քննարկվում ռեսպուբլիկայի բնակավայրերը կանաչազարդելու, օդն ու ջուրը արդյունաբերական թափուկներից մաքրելու, ջուրն ու անտառային հարստությունները ռացիոնալ կերպով օգտագործելու հարցերը, որոնց առթիվ ընդունվում են կոնկրետ որոշումներ ու միջոցառումներ։

Մեր բնության պահպանման ու գեղեցկացման գործում մեծ է և եղբայրական ռեսպուբլիկաների հետ ունեցած օրըստօրե լայնացող կապերի նշանակությունը։ Դա մի կողմից ընդլայնում ու ամրապնդում է ժողովուրդների եղբայրական բարեկամությունը, իսկ մյուս կողմից զարկ է տալիս քաղաքների ու շրջանների բարեկարգման գործին։ Այս տեսակետից մեծ նշանակություն ունի ընկերության կապը Ուկրաինայի ու Վրաստանի ընկերություններին։

հետ: Այդ ռեսպուբլիկաների մայրաքաղաքների փորձից շատ բան կարելի է ընդօրինակել ու օգտագործել Երևանի կանաչազարդման համար: Այս գործին մեծապես օգնում են ընկերության շուրջը համախմբված ռեսպուբլիկայի անվանի գիտնականները, որոնք իրենց ավանդն են ներդրել Երևանի կանաչ շինարարության հարցերի մշակման մեջ: Նույն գիտնականների օգնությամբ ընկերության նախագահությունը ակտիվ կերպով նպաստում է Լենինականի, Ստեփանավանի, Կալինինոյի, Կամոյի ու ռեսպուբլիկայի այլ քաղաքների շուրջը անտառային զանգվածներ ու շերտեր ստեղծելուն, ջրամբարներ կառուցելուն ու արհեստական ձկնաբուծության զարգացմանը:

Հայաստանի բնության պահպանության ընկերությունը մշակել և համապատասխան օրգաններին է հանձնել բնության պահպանության միջոցառումների մի շարք առաջարկություններ, որոնք կենսագործվել ու կենսագործվում են կյանքում: Բերենք այս տեսակետից ուշագրավ մի քանի օրինակներ: Հայտնի է, որ ամեն անգամ, երբ ժողովուրդը դիմավորում է նոր տարին, անհամար քանակությամբ եղևնիներ են կտրատվում տոնածառեր սարքելու համար: Հաճելի տոնը, ինչպես տեսնում ենք, ունի իր անհաճ կողմը, որն իրեն զգացնել է տալիս բուսական աշխարհի այն գոտիներում, ուր եղևնին անհամեմատ քիչ է: Արգելել նոր տարվա տոնակատարությունը, իհարկե, չի կարելի, բայց չպետք է մոռանալ այն վնասը, որ հասցնում է եղևնիների հատումը մեր բուսական աշխարհին: Հայաստանի բնության պահպանության ընկերության նախագահությունը առաջ քաշեց բնական անտառներում տոնածառի հատումը դադարեցնելու և արհեստական տոնածառերի արտադրությունը կազմակերպելու հարցը և իր առաջարկը ուղարկեց ՍՍՀՄ կառավարությանն ու Գյուղատնտեսության մինիստրությանը: Հավանության արժանացնելով այդ առաջարկը, ՍՍՀՄ Գյուղատնտեսության մինիստրությունը հատուկ շրջաբերականով եղբայրական ռեսպուբլիկաների մինիստրություններին ու հողային օրգաններին խորհուրդ տրվեց քննարկել այն և տեղական պայմանները հաշվի առնելով գործադրել կյանքում: Ընկերության այս առաջարկի հիման վրա Հայաստանի և Վրաստանի կառավարությունները որոշում են ընդունել անտառներում եղևնիների հատումը արգելելու և արհեստական տոնածառի արտադրության կազմակերպելու մասին:

Ընկերության նախագահությունը և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բնության պահպանության հանձնաժողովը իրենց նիստերում քննարկել են ու կառավարությանը ներկայացրել Արարատյան դաշտավայրի արտեզյան ջրերի անտնտեսվար օգտագործման միջոցառումները:

Հայտնի է, որ վնասատուների, հատկապես կրծողների դեմ պայքարելու համար թունավոր նյութերը ավիացիայի միջոցով գործադրելու մեթոդը տալիս է դրական արդյունքներ: Բայց միաժամանակ այդ մեթոդը որոշ վնաս է հասցնում մեր օգտակար կենդանական աշխարհին: Հայաստանի բնության պահպանության ընկերության միջոցով հրավիրվել է այդ հարցին նվիրված խորհրդակցություն, ուսումնասիրվել են վնասատուների դեմ պայքարելու գործում ավելի արդյունավետ միջոցներ որոնելու հարցերը այն հաշվով, որ պայքարի ընթացքում օգտակար ֆաունան զերծ պահվի գործադրվող թունավոր նյութերից: Նկատի ունենալով գիտության վերջին տարիների փորձը, ընկերության նախագահությունը այժմ հարց է բարձրացրել ռեսպուբլիկայում գյուղատնտեսական կուլտուրաների ու կանաչ տնկարկների վնասատուների դեմ պայքարելու գործում բիոլոգիական պայքարին լայն տեղ տալու վերաբերյալ. դա հնարավորություն է տալիս վնասատուներին ոչնչացնելու նպատակով օգտագործել նրանց կենդանի թշնամիներին:

Ընկերության նախագահությունը մշակել է ու Երևանի քաղսովետին ներկայացրել որոշ միջոցառումներ քաղաքի կանաչ տնկարկները պահպանելու, բարելավելու, օդի ու ջրի աղտոտման դեմ պայքարելու ուղղությամբ:

Ընկերության նախագահությունն ու Գիտությունների ակադեմիայի բնության պահպանության հանձնաժողովը իրենց նիստերում լսել ու քննարկել են պետական արգելանոցների պահպանման հարցերով զբաղվող գիտական աշխատողների զեկուցումները և անհրաժեշտ օգնություն են ցույց տվել նրանց գիտական աշխատանքը բարձրացնելու ուղղությամբ: Ընկերության նախագահությունն ու հանձնաժողովը ընդամենը ձեռնարկել են պետական արգելանոցների հարցերին նվիրված գիտա-հետազոտական ինքնուրույն աշխատանք: 1961 թ. ընթացքում նրանք հատուկ արշավախմբի միջոցով ուսումնասիրել են Գառնիի արգելանոցի Խոսրովի անտառի պայմանները՝ հողն ու ջուրը, անտառներն ու կենդանական աշխարհը, երկրաբանական կառուցվածքը, վնասատուները և պատրաստել են հատուկ աշխատություն, որը մոտ ապագայում կհանձնվի տպագրության:

Ընկերությունը Երևանում բացել է ռեսպուբլիկայում առաջին կենդանաբանական խանութը, որը բավական շոշափելի ու հանրօգուտ կուլտուրական գործ է կատարում: Խանութը ընկերության անդամներին, բնասերներին,

դպրոցներին, հիմնարկներին մատակարարում է ակվարիումներ, ակվարիումային ձկներ, երգեցիկ թռչուններ ու վանդակներ, ծաղկի սերմեր ու պարարտանյութեր, դեկորատիվ բույսեր, գրականություն։ Այդ ճանապարհով կարճ ժամանակամիջոցում ընկերություն դպրոցներում ու աշխատավորության մեջ տարածել է 500 ակվարիում, 550 թռչնավանդակ, 2000-ից ավելի դեղձանիկ ու այլ երգեցիկ թռչուններ, 15000-ից ավելի ակվարիումային ձկներ և այլն։

Որսագողերի դեմ պայքարելու նպատակով ընկերություն տեղերում ունի հասարակական տեսուչներ, որոնց, կառավարության որոշմամբ, պետական տեսուչների իրավունք է տրվում։ Այդ տեսուչները, որոնց թիվը այժմ հասնում է 500-ի, ոչ միայն պատասխանատվության են կանչում բնության պահպանության պետական օրենքները, կարգն ու կանոնը խախտողներին, այլև դաստիարակչական աշխատանք են տանում տեղերում։

Հայաստանի Բնության պահպանության ընկերության ներկայացուցիչները ակտիվ կերպով մասնակցում են բնության պահպանության հարցերին նվիրված բազմաթիվ կոնֆերանսներին ու խորհրդակցություններին. ընկերության նախագահը 1960 թ. Վարշավայում տեղի ունեցած բնության պահպանության միջազգային VII կոնգրեսում հանդես է եկել Սովետական Միությունում հողերի պահպանության հարցերին նվիրված զեկուցումով։

1961 թ. ընկերությունը Գիտությունների ակադեմիայի բնության պահպանության հանձնաժողովի հետ միասին Երևանում անցկացրեց բնության պահպանության հարցերին նվիրված անդրկովկասյան խորհրդակցություն, որը լսեց ու քննարկեց 18 զեկուցում։ Խորհրդակցությունում զեկուցումներով հանդես եկան Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի ու Մոսկվայի գիտնականները։ Այդ խորհրդակցությանը մասնակցում էին երեք ռեսպուբլիկաների գիտական, արտադրական ու կուլտուրական հիմնարկների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Բնության պահպանության հարցերը ավելի լավ հիմքերի վրա դնելու նպատակով խորհրդակցությունը մի շարք նոր խնդիրներ է բարձրացնում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի կառավարությունների առաջ։ Մասնավորապես առաջ են քաշվում բնության պահպանության պետական կոմիտե ստեղծելու հարցը և նման այլ հարցեր։

Բնության պահպանության ընկերության ու հանձնաժողովի միջնորդությամբ ռեսպուբլիկայում պետական պահպանության տակ են առնվել փշատերև մշտադալար ծառատեսակները՝ սոճին, գիհին, սոսին, հազվագյուտ տիսը, մորտավարդը, ինչպես նաև կուրորտային նշանակություն ունեցող որոշ անտառամասեր։

Հազվագյուտ բուսական ու կենդանական տեսակները իրենց բնության հուշարձաններ պահպանելու համար ընկերությունը հայտնաբերել է մի շարք այնպիսի վայրեր, ինչպես օրինակ, Գորովանի ավազուտները։ Գիտության համար բացառիկ նշանակություն ունեցող այդ վայրերը ընկերության առաջարկով հայտարարվել են արգելավայրեր։

Անհրաժեշտ է հիշատակել նաև այն, որ ընկերությունը և Ակադեմիայի բնության պահպանության հանձնաժողովը սիստեմատիկաբար ստուգում են բնության պահպանման օրենքի կիրառման ընթացքը ռեսպուբլիկայում և ակտիվ կերպով օգնում են պետական հիմնարկներին՝ Պետպլանին, Գյուղատնտեսության մինիստրությանը, Գերագույն Սովետին ու այլ կազմակերպություններին այդ օրենքը կյանքում իրականացնելու գործում։

Պրոֆ. Ե. ՄԵՐԻՄԱՆՅԱՆ
Հայաստանի բնության պահպանության ընկերության նախագահ